ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--------» ---------- 2016թ. N ------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետի ժբ) ենթակետով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2015 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչ հոկտեմբերի 1-ը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2015 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման կատարմամբ:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ընկերությունների 2015 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման համար հիմք են հանդիսացել կազմակերպությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև Երևանի բյուջե տարեկան շահութաբաժնի վճարման չափի առաջարկության մասին տեղեկանքներն ու զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Համայնքի սեփականություն հանդիսացող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող և գործունեություն ծավալած 57 ընկերություններից 2015 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով շահույթով են աշխատել 51 ընկերություններ, որոնց զուտ շահույթը կազմել է 473211.5 հազ. դրամ:

Փաստացի ստացված 473211.5 հազ. դրամ զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների գումարը կկազմի 150841.5 հազ. դրամ, քանի որ թվով 4 ընկերությունների («Թիվ 1 պոլիկլինիկա», «Կարմիր Բլուր պոլիկլինիկա», «Արաբկիր-Կամար», «Արաբկիր-Սերվիս» ՓԲԸ-ներ) զուտ շահույթներից՝ 33175.7 հազ. դրամից շահութաբաժին չի հաշվարկվում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետի հիմքով այդ ընկերությունների մոտ առկա են շահութաբաժինների վճարման սահմանափակումներ (զուտ ակտիվների արժեքը պակաս է կամ կպակասի կանոնադրական կապիտալից շահութաբաժինների վճարման հետևանքով):

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշման 3-րդ կետի դրույթները՝ «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն ազատվել է շահութաբաժնի վճարումից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի քաղաքապետարանի կողմից «Դավիթ Անհաղթ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացված 74.0 մլն. դրամ դրամաշնորհը փոխանցվել է Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.186-Ա որոշման հիման վրա առանձնացման ճանապարհով ձևավորված «Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա» (այսուհետ՝ Պոլիկլինիկա) ՓԲԸ-ին՝ վերջինիս և «Քանաքեռ-Զեյթուն ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերության պարտքերի մարման նպատակով և Պոլիկլինիկայի կողմից ճանաչվել է եկամուտ: Արդյունքում Պոլիկլինիկայի զուտ շահույթը կազմել է 62.9 մլն. դրամ, սակայն հիմնական գործունեության արդյունքում ստացվել է 12.4 մլն. դրամ վնաս, իսկ ֆինանսական ճեղքվածքը 01.01.2016թ. դրությամբ կազմել է 6.8 մլն. դրամ:

Այլ հիմնադրամներին հատկացումները կատարվել են՝ հաշվի առնելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի դրույթները և կազմակերպությունների առաջարկությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2015 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 50 ՏՈԿՈՍԻՑ ԱՎԵԼԻ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2015 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժնների չափերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
«--------» ---------- 2016թ.
N ---------- Ա որոշման

Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2015 թվականի տարեկան զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը

հազ.դրամ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	2015 թվականի տարեկան զուտ շահույթ	Համայնքի մասնակցության շահութաբաժին	Պահուստային կապիտալ	Սպառման հիմնադրամ	Այլ	Վնասների նվազեցում
1	«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն» ՓԲԸ	21735.0	8694.0	1086.7	5000.0	6954.3	
2	«Սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ	19211.2	7684.5				11526.7
3	«Նոր Արաբկիր» ԱԿ» ՓԲԸ	3935.4	1574.2	2281.5	79.7		
4	«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	9642.0	3856.8	3000.0	2785.2		
5	«Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ	2964.0	1185.6	1482.0		296.4	
6	«Քաղաքային Էնդոկրին դիսպանսեր» ՓԲԸ	726.0	290.4	435.6			
7	«Կարլեն Եսայան պոլիկլինիկա» ՓԲԸ	62932.0				59038.0	3894.0
8	«Թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ	5095.1		1110.3		35.0	3949.8
9	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	1751.6	700.6	329.0		720.0	2.0
10	«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ	8027.0	3210.8	1204.0	2408.0	1197.2	7.0
11	«Թիվ 8 պոլիկլինիկա» ՓԲԸ	11816.0	4726.4	5367.0	1722.6		
12	«Թիվ 12 պոլիկլինիկա» ՓԲԸ	7015.8	2806.3	4201.5			8.0
13	«Թիվ 13 պոլիկլինիկա» ՓԲԸ	1481.0	592.4			888.6	
14	«Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ	2279.0	911.6	341.8	683.7	341.9	
15	«Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ	1837.0	734.8	541.8		560.4	
16	«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ	3830.0	1532.0			2298.0	
17	«Թիվ 20 պոլիկլինիկա» ՓԲԸ	1608.8	643.5	194.0	400.0	371.3	
18	«Թիվ 22 պոլիկլինիկա» ՓԲԸ	2590.0	1036.0	1200.0		354.0	
19	«Կարմիր Բլուր» պոլիկլինիկա ՓԲԸ	26939.0					26939.0
20	«Նուբարաշեն» պոլիկլինիկա» ՓԲԸ	644.0	257.6	140.4		246.0	
21	«Նորագավիթ պոլիկլինիկա» ՓԲԸ	423.3	169.3	100.0		154.0	
22	«Սարի թաղ» պոլիկլինիկա» ՓԲԸ	1275.0	510.0	381.0		384.0	
23	«Արշակունյաց պոլիկլինիկա» ՓԲԸ	823.7	329.5	488.2			6.0
24	«Նոր Արեշ» պոլիկլինիկա» ՓԲԸ	9553.5	3821.4				5732.1
25	«Արաբկիր մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	4129.7	1651.9	124.0		2353.8	
26	«Թիվ 9 մանկական պոլիկլինիկա» ՓԲԸ	78.4	31.4	47.0			
27	«Երևանտրանս» ՓԲԸ	87189.0	34875.6		35313.4	17000.0	
28	«Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՓԲԸ	3373.0	1349.2		1500.0	523.8	
29	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	7285.0	2914.0	364.2	2006.0	2000.8	
30	«Երևաննախագիծ» ՓԲԸ	17657.0	7062.8	880.0	9714.2		

31	«Քաղաքաշինություն» ՓԲԸ	18894.0	7557.6	945.0	7558.0	2833.4	
32	«Նոր բարեկարգում» ՓԲԸ	9724.0	3889.6	1944.8	1944.8	1944.8	
33	Ջրային կառույցների ՓԲԸ	266.0	106.4				159.6
34	«Երքաղլույս» ՓԲԸ	85586.0	34234.4		41351.6	10000.0	
35	«Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ	78.0	31.2		46.8		
36	«Հայ-Արտ» Մշակութային կենտրոն ՓԲԸ	937.0	374.8				562.2
37	«Զևավորում» ՓԲԸ	2970.0	1188.0				1782.0
38	«Աջափնյակ-վերելակ» ՓԲԸ	97.1	38.8			58.3	
39	«Աջափնյակ-կանաչապատում» ՓԲԸ	501.1	200.4			300.7	
40	«Ավան- կանաչապատում» ՓԲԸ	4370.0	1748.0			2622.0	
41	«Արաբկիր-Կամար» ՓԲԸ	975.6					975.6
42	«Արաբկիր-Սերվիս» ՓԲԸ	166.0					166.0
43	«Դավթաշենի կանաչապատում» ՓԲԸ	1516.0	606.4		859.6	50.0	
44	«Վարդավառ զբոսայգի» ՓԲԸ	5427.9	2171.2		1400.7	1856.0	
45	«Կենտրոն-կանաչապատում» ՓԲԸ	1740.0	696.0			1044.0	
46	«Անխափան վերելակ» ՓԲԸ	641.3	256.5		384.8		
47	«Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ	4724.0	1889.6			2834.4	
48	«Կանաչ բարձրունք» ՓԲԸ	1343.0	537.2	201.0		604.8	
49	«Նուբարաշեն» ՓԲԸ	774.0	309.6	464.4			
50	«Շենգավիթ-կանաչապատում» ՓԲԸ	2068.0	827.2	300.5		313.0	627.3
51	«Քանաքեռ-Զեյթուն Բարեկարգում» ՓԲԸ	2565.0	1026.0	335.0		1204.0	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**473211.5**	**150841.5**	**29490.7**	**115159.1**	**121382.9**	**56337.3**